ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ՀՏԴ 801.7
DOI: 10.56246/18294480-2023.15-28

ԻԳՆԱԹԵՎՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ԳՊՀ կարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի
մագիստրատուրայի շրջանավարտ
էլփոստ՝ nar.ignatevosyan@mail.ru
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՎԱՐՍԻԿ
ԳՊՀ և ՀՊՄՀ դասախոս, ԳԱԱ ԼԻ ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ varsik.nersisyan@mail.ru

Բառակազմության ուսուցումը համարվում է բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից մեկը, և այն շարունակ պետք է լինի ուսուցչի ուշադրության կենտրոնում: Առանց հարուստ և ակտիվ բառապաշարի չի կառուցվում պատկերավոր, դիպուկ և գեղեցիկ խոսք: Այս ամենով էլ պայմանավորված է մեր ուսումնասիրության թեմայի արդիականությունը: Մեր նպատակն է եղել բացահայտել տարրական դպրոցում բառակազմության ուսումնասիրման առանձնահատկությունները, ցույց տալ բառակազմության դերը աշակերտների բառապաշարի հարստացման գործընթացում, հետազոտական աշխատանքների միջոցով նպաստել խոսքի զարգացման գործընթացում դասավանդման մեթոդների կատարելագործմանը:

Հոդվածում ներկայացրել ենք ժամանակակից հայերենի բառակազմության վերաբերյալ տեսական գրականության, ինչպես նաև տարրական դասարաններում բառակազմության ուսումնասիրման գիտամեթոդական համակարգի համառոտ վերլուծությունը:

Կարելի է նշել, որ բառակազմության ուսուցումը տարրական դպրոցում նպաստում է աշակերտների գործուն և ոչ գործուն բառապաշարի հարստացմանը, օգնում է ձևավորելու նրանց լեզվամտածողությունը, զարգացնում է տրամաբանությունը:

Բառակազմական միավորների ուսուցումը, բառակազմական եղանակների գործածությունը և բառակազմական վերլուծությունը մեծ ու կարևոր դեր են կատարում նոր բառեր կազմելու կարողության ձևավորման և բառիմաստի ընկալման գործում՝ երկրորդաբար դառնալով բառապաշարի հարստացման հիմք:

Առաջարկում ենք բառակազմական առաջադրանքներ ներմուծել մյուս լեզվական նյութերի հետ համատեղ, որը նաև բառապաշարը հարստացնելու և զարգացնելու ևս մի հնարավորություն է:

Բանալի բառեր՝ *բառակազմություն, տարրական դասարաններ, բառապաշար, փոխներգործուն մեթոդական հնարներ, փորձարարական դասեր, հարցախույզ:*

Որպես լեզվաբանական եզրույթ՝ «բառակազմություն» բառը գործածվում է երկու իմաստով. ա) լեզվաբանության այն բաժինն է, որն զբաղվում է բառերի կառուցվածքի, բառերի կազմության օրենքների ու կանոնների, լեզվի բառակազմական համակարգի քննությամբ, բ)

բառակազմությունը նոր բառերի կազմության գործընթացն է, լեզվի բառակազմական օրենքներով նոր բառերի կազմումը[1]: Նոր բառերի ստեղծումը բառապաշարի լրացման հիմնական աղբյուրն է: Բառակազմության եղանակները (բառաբարդում, ածանցում) ժամանակակից հայերենը հիմնականում ժառանգել է լեզվի զարգացման նախորդ փուլերից: Նոր բառերի ստեղծման ժամանակակից եղանակ է հապավումը:

Նոր բառերի կազմությունը ինչպես մյուս լեզուներում, այնպես էլ հայերենում կատարվում է արդեն առկա բառերի, արմատների և ածանցների հիման վրա: Մեր իրականացրած դասալսումների, մշակած և վարած դասերի,ուսուցիչների շրջանում իրականացրած հարցախույզի արդյունքների վերլուծության միջոցով փորձել ենք բացահայտել բառակազմության ուսումնասիրման տեղն ու դերը կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման գործում: Հետազոտական աշխատանքներն իրականացրել ենք Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի Ա. Օհանյանի անվան №2 հիմնական դպրոցի տարրական դասարաններում:

Ուսումնասիրության **նորույթը** պայմանավորված է հետազոտական աշխատանքի ընթացքում մշակած և վարած դասերի, հարցախույզի վերլուծության արդյունքում ներկայացված առաջարկություններով:

Բառակազմության ուսումնասիրման առանձնահատկությունները տարրական դասարաններում: ՀՀ կրթության մասին օրենքում ասվում է. «Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է աշակերտի լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը»[2]: «Հանրակրթության պետական կրթակարգի» մեջ նշվում է. «Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է»[3]:

Վերոհիշյալ դրույթներից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ տարրական դասարաններում պետք է ապահովել աշակերտների ուսումնական գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Մայրենի լեզվի տարրական դասընթացը, ինչպես հայտնի է, բաժանվում է երկու բաժինների՝ **լեզվական տարրական գիտելիքներ և լեզվական նախագիտելիքներ**:

Ե՛վ լեզվական տարրական գիտելիքները, և՛ նախագիտելիքներն անցնում են համակցված ձևով, այսինքն՝ ընթերցանության հետ միասին: Ըստ Ա. Տեր-Գրիգորյանի՝ «Մայրենի լեզվի տարրական դասընթացը քերականական նյութերը վերցնելիս աչքի առաջ է ունենում աշակերտների ընդունակություններն ու ընկալման հնարավորությունները, նրանց լեզվական պաշարը և ուսուցանելիք նյութերի գործնական արժեքը…»[4]:

Տարրական դասարաններում բառային աշխատանքի բոլոր ուղղությունները պետք է կազմակերպել գործնական ճանապարհով՝ հիմնականում հենվելով մայրենիի դասագրքերում ներառված գեղարվեստական բնագրերի վրա՝ առանց տեսական տեղեկություններ, սահմանումներ, քերականական եզրույթներ հաղորդելու: Ըստ պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյանի՝ բառային աշխատանքները կատարվում են մի շարք քայլերով.

1.Անծանոթ բառի առանձնացում, իմաստի բացատրում, իմաստավորում:

---

[1]. Տե՛ս Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե. 2004, էջ 219:

[2]. Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք, ընդ. 14. 04. 1999թ., Հոդված18, կետ 4:
https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299

[3]. Տե՛ս Հանրակրթության պետական կրթակարգ, ընդ. 27.05 2004, N20, կետ 3:
https://www.irtek.am/views/act.aspx?aid=25829

[4]. Տե՛ս Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Տարրական դասարաններ, Ե. 1980, էջ 317:

2.Բառակազմական վերլուծություն, որի հիման վրա բացահայտվում է անծանոթ բառի նշանակությունը:

3.Բառերի համեմատում՝ բառակազմական տարբերությունների բացահայտման նպատակով, որը հնարավորություն է ստեղծում նույնարմատ բառերի իմաստների սահմանազատման ***(արծաթյա և արծաթափայլ, անտառ և անտառապահ, ծաղիկ և ծաղկավոր*** և այլն):

4.Բացատրություն կռահման ճանապարհով: Ուսուցիչը կարդում է անծանոթ բառ պարունակող նախադասությունը և աշակերտներին հարցնում է, թե նրանք ի՞նչ են կարծում, ի՞նչ կարող է նշանակել այդ բառը: Կարո՞ղ են կռահել բառի իմաստը՝ մեկ անգամ ևս կարդալով նախադասությունը:

5.Նորածանոթ բառերի բացատրություն տեղեկատվական նյութերի միջոցով:

6.Առարկայի, նկարի, մակետի, խրտվիլակի կամ գործողության ցուցադրում:

7.Հականիշ զույգերի ընտրություն:

8.Մեկնաբանող նկարագրություն[5]**:**

«Բառակազմություն» թեման ուսումնասիրվում է երկրորդ դասարանում, սակայն աշակերտները դեռ առաջին դասարանից արդեն որոշակի տեղեկություններ են ստանում ընդհանուր մաս ունեցող բառերի մասին: Ինչպես նշվում է մեթոդական գրականության մեջ, «Երկրորդ դասարանի՝ ծրագրով նախատեսված նյութը առաջին դասարանում մատուցված նյութի օրգանական և տրամաբանական շարունակությունն է՝ նրա կրկնությամբ, ծավալումով ու խորացմամբ և, անշուշտ, նոր գիտելիքների մատուցմամբ, ուստի հետևողականորեն պետք է շարունակվի այն կարողությունների զարգացումը, որոնք արդեն ձևավորվել են առաջին դասարանում, պետք է ամրակայվեն ու խորացվեն այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել առաջին դասարանում»[6]: Ըստ Ջ. Գյուլամիրյանի՝ «Բառակազմական վարժությունները նպաստում են ուղղագրական գիտելիքների և կարողությունների ձևավորմանը: Մասնավորապես բարդ, բարդածանցավոր բառերը թելադրությամբ գրելիս աշակերտները պիտի կատարեն բառակազմական վերլուծություն, և եթե աշակերտները կարողանում են հմտորեն որոշել բառի ձևույթները, նրանք բառի գրության մեջ սխալներ թույլ չեն տա»[7]:

Բառակազմության ուսումնասիրման դերը աշակերտների բառապաշարի հարստացման գործում: Տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսուցման առաջնահերթ պահանջներից է աշակերտների բառապաշարի հարստացումը և խոսքի զարգացումը: ««Բառակազմություն» թեմայի ուսումնասիրությունը ոչ միայն տեսական՝ երեխաների լեզվական գիտելիքների հարստացման ու դրանց սահմանների ընդարձակման նպատակ է հետապնդում, որը, անշուշտ, առկա է, այլև գործնական՝ բառապաշարի հարստացման, բառակազմական հնարների, ունեցած բառապաշարը լայն գործածության մեջ դնելու և այդ հիմքի վրա բազմաթիվ նոր բառեր ստանալու»[8]: Վերջին հաշվով լեզվական գիտելիքների հաղորդումը նպաստում է աշակերտների լեզվամտածողության զարգացմանը, գրագետ և գեղեցիկ խոսք կառուցելու կարողության ձևավորմանը:

Բառակազմական աշխատանքը բառապաշարի հարստացման միջոց ծառայեցնելու համար կարելի է կիրառել տարաբնույթ մարզողական, ամրակայող և այլ վարժություններ: «Նախապատրաստական վարժության համար կարելի է վերցնել պարզ և պարզ ածանցավոր

---

[5].Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե. 2018, էջ 297:

[6].Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան, Մայրենի 2, Ուսուցչի ձեռնարկ, Ե. 2009, էջ 4:

[7].Ջ. Գյուլամիրյան, նշվ. աշխ., Ե. 2018, էջ 220:

[8]. Տե՛ս Ա. Տեր-Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 345:

բառերից կազմված մի բնագիր և առաջարկել երեխաներին բառերը խմբավորել՝ միայն արմատից կազմվածները գրել մի սյունակում, իսկ ածանցավորները՝ մյուսում»[9]:

Բառերի ստեղծումը հնարավորություն է տալիս աշակերտներին իրենց իմացած արմատներով կազմել նոր բառեր, որոնց շնորհիվ նրանց համեմատաբար սահմանափակ բառապաշարը միանգամից բազմապատկվում է: Բառակազմության եղանակները յուրացնելով՝ աշակերտներն ավելի գիտակցորեն են կիրառում իրենց իմացած բառերը՝ դրանք տարբեր կապակցությունների մեջ դնելով և լիովին նոր բառեր ստանալով: Սա հսկայական առաջընթաց քայլ է բառապաշարի հարստացման և ընդհանրապես խոսքի զարգացման բնագավառում[10]:

Այսպիսով՝ բառակազմությունը յուրովի է նպաստում տարրական դասարանների աշակերտների բառապաշարի հարստացմանը և տալիս է աշխարհաճանաչողական գիտելիքների ու տեղեկությունների այն ամբողջությունը, որ պետք է իմանան ուսուցման տարրական դպրոցն ավարտող աշակերտները:

Փորձարարական դասերի վերլուծություն: Բառակազմության ուսուցումը տարրական դասարաններում մեծապես նպաստում է աշակերտների գործուն և ոչ գործուն բառապաշարի հարստացմանը: Սակայն ցանկալի արդյունք ստանալու համար պետք է դասագրքերի ընձեռած հնարավորությունները շատ լավ ուսումնասիրել, մշակել առաջադրանքների ու վարժությունների մի ամբողջական համակարգ, աշակերտների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում, ապահովել նաև աշխատանքի անհրաժեշտ պայմանները և այլն:

Տարրական դասարաններում «Բառակազմություն» թեմայի ամփոփման ժամանակ կարելի է ուսուցչի դերը սահմանափակել, դարձնել միայն կազմակերպիչ, ուղղորդող: Իսկ մնացած ամբողջ գործընթացը՝ ուսումնական նյութի յուրացում, փոխուսուցում, ամրապնդում, իմաստավորում, իրականացվում է հենց աշակերտների ջանքերով[11]:

Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի Ա. Օհանյանի անվան հիմնական դպրոցի երկրորդ և երրորդ դասարաններում անցկացրել ենք մայրենի լեզվի դասեր: Առաջին դասն անցկացրել ենք երկրորդ դասարանում (դպրոցում կար մեկ երկրորդ դասարան):

«Բառակազմություն» թեման ուսուցանելու ժամանակ կազմակերպել ենք խմբային աշխատանք՝ ուսուցողական խաղի միջոցով, որն անցկացնելու ընթացքում աշակերտներն ավելի հեշտությամբ յուրացրին և ընկալեցին թեման: Այս ուսուցողական խաղն անցկացրել ենք երկու փուլով: Առաջին փուլում դասարանը բաժանել ենք հինգհոգանոց (25 աշակերտ) հինգ խմբերի, յուրաքանչյուր խմբին բաժանել ենք գունավոր թուղթ, որի վրա նկարված էր ծաղիկ: Ծաղկի մեջտեղում գրված էր արմատ-բառը, որի օգնությամբ աշակերտները որոշակի ժամանակահատվածում թերթիկների վրա գրել են բառ-արմատ կամ ածանց, որոնք միացրել են մեջտեղի արմատ-բառին և կազմել նոր բարդ կամ ածանցավոր բառեր:

Օրինակ՝ մի թղթի վրա նկարված ծաղկի մեջտեղում գրված էր **հաց** արմատ-բառը: Աշակերտները պետք է ծաղկաթերթիկների վրա գրեին արմատ կամ ածանց, որոնք, միացնելով **հաց** արմատին, կստացվեին նոր բարդ կամ ածանցավոր բառեր. **հաց** – ***հատիկ, թուխ, -եղեն, ման, տուն, չոր, -ենի:***

Երկրորդ փուլում յուրաքանչյուր խմբին տվել ենք երկու բառաշարք բարդ բառեր և հանձնարարել այդ շարքերի բառերը բաժանել բաղադրիչների և յուրաքանչյուր շարքից մեկական արմատով կազմել նոր բարդ բառ.

ծովեզր **լայնարձակ**

---

[9].Ա. Տեր-Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 350:

[10].Տե՛ս Ռ. Խարազյան, Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, Ե. 2003, էջ 56:

[11]. Տե՛ս Ա. Բալայան, «Բառակազմություն» թեմայի ուսուցումը համագործակցային մեթոդով, «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, Ե. 2005(3-4), էջ 15:

արևածաղիկ **մայրամուտ**
նավապետ **հանգստավայր**
հացթուխ **դեղատուն**
պատկերազարդ **հանդերձասրահ**

Առաջինն անսխալ իր աշխատանքն ավարտեց մեկ խումբ, և խմբի բոլոր աշակերտներն ստացան տասը միավոր: Դասաժամն անցավ շատ ակտիվ և, կարծում ենք, դրական արդյունք տվեց, քանի որ երկու փուլում էլ աշակերտները (նույնիսկ ոչ ակտիվները) շատ ուշադիր էին և ինքնավստահ:

Մայրենիի երկրորդ դասաժամն անցկացրել ենք երրորդ դասարանում (տասնութ աշակերտ)՝ նախօրոք մշակված դասի պլանով (դասի թեման՝ Գոհար Փիլոյանի «Կաթիլը»), ըստ որի նախօրոք A4 ձևաչափի թղթերի վրա (յուրաքանչյուր թղթի վրա՝ մեկ բառ կամ արտահայտություն) բնագրից դուրս էինք գրել ***քարացած կաթիլ, բարձր սար, ամպ, ագռավ, քչքչան գետակ, ձյուն, սառույց*** բառերն ու արտահայտությունները և փակցրել գրատախտակին: «Կանխագուշակումներ հենակետային բառերով ու արտահայտություններով» հնարի միջոցով աշակերտներին առաջարկեցինք կանխագուշակումներ անել տեքստի բովանդակության վերաբերյալ, հորինել պատմություն: Կիրառելով «ուղղորդված ընթերցանություն» մեթոդը՝ աշակերտներին հանձնարարեցինք բնագիրը կարդալ հատվածներով ու դադարներով: Յուրաքանչյուր հատվածի ընթերցումից հետո հարցերի միջոցով ստուգեցինք նրանց ուշադրությունը և կարդացածի ընկալման աստիճանը: Բնագրի ընթերցումից հետո տվեցինք վերլուծական, ստեղծագործական և վերարտադրողական հարցեր, որոնք նպաստում են շերտավորված ուսուցումն ավելի արդյունավետ կազմակերպելուն:

Դասի վերջում տրված լեզվական նյութն ուսումնասիրելու նպատակով կատարեցինք մի քանի առաջադրանք (**1. Տրված բառերով կազմե՛լ հինգ բարդ բառ և գրե՛լ տետրում: 2. Բառերը բաժանված են վանկերի: Գտնե՛լ այդ բառերը, ընդգծե՛լ արմատները: 3. Տեղադրե՛լ տրված պարզ, ածանցավոր և բարդ բառերն աղյուսակի համապատասխան սյունակներում**):

Ամփոփելով երկու դասարաններում անցկացրած դասերը, համեմատելով և վերլուծելով արդյունքները՝ եկանք այն եզրակացության, որ բառակազմության ուսումնասիրության գործընթացում երկու դասարաններում կիրառված մեթոդներն ու հնարները հիմնականում արդյունավետ էին: Կարելի է փաստել, որ բառակազմության ուսումնասիրումը տարրական դասարաններում բառապաշարի հարստացման միջոց է, իսկ մայրենիի դասագրքերում, ուսումնաօժանդակ ձեռնարկներում եղած նյութերն աշակերտներին օգնում են թեման հեշտությամբ յուրացնելուն:

Ուսուցիչների շրջանում իրականացրած հարցախույզի արդյունքների վերլուծություն: Մեր ուսումնասիրության նպատակով պայմանավորված՝ փորձել ենք ուսուցիչների շրջանում կատարել հետազոտություն՝ պարզելու բառակազմության ուսուցման միջոցով կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման արդյունավետության բարձրացման հնարավորությունները: Այդ նպատակով կազմել ենք հարցաթերթիկ և իրականացրել հարցախույզ, որին մասնակցել է շուրջ 30 ուսուցիչ: Ստորև կներկայացնենք հարցման արդյունքների վիճակագրական վերլուծությունը: Այսպես՝

«Ձեր կարծիքով՝ որքանո՞վ է բառակազմության ուսուցումը նպաստում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացմանը» հարցին ի պատասխան՝ ունենք հետևյալ արդյունքը. հարցման մասնակիցների 93%-ը կարծում է, որ բառակազմության ուսուցումը նպաստում է կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացմանը, օգնում է ունեցած բառապաշարը լայն գործածության մեջ դնելուն և նոր բառեր սովորելուն: 7%-ը կարծում է, որ քիչ է նպաստում***:***

Պատասխանելով հաջորդ հարցին ***(Մայրենիի դասագրքերում առկա առաջադրանքները նպաստու՞մ են արդյոք կրտսեր դպրոցականի բառակազմական գիտելիքների ձևավորմանը)*** ուսուցիչների 63%-ը կարծում է, որ մայրենիի դասագրքերում առկա առաջադրանքները նպաստում են տարրական դպրոցում բառակազմական գիտելիքների ձևավորմանը, 32%-ը կարծում է, որ այնքան էլ չեն նպաստում, կարելի է բառակազմական առաջադրանքները երրորդ և չորրորդ դասարանների մայրենիի դասագրքերում որոշ չափով ավելացնել:

Այն հարցին, թե բառակազմության ուսուցման ժամանակ կիրառո՞ւմ են խաղային մեթոդ-ներ, և արդյո՞ք այդ մեթոդները մոտիվացնում են երեխաներին, 25 ուսուցիչ պատասխանել է, որ կիրառում են խաղային մեթոդներ, որոնք բավականին մոտիվացնում են, քանի որ աշակերտների շրջանում հետաքրքրությունը մեծանում է, և գրեթե ամբողջ դասարանը մասնակցում է դասին: Այս մեթոդները դասանյութը դարձնում են հետաքրքրաշարժ, գրավիչ և ոչ ձանձրալի: Չորսը պատասխանել են, որ դրանք արդյունավետ են, իրենք կիրառում են, բայց չափավոր: Մեկը պատասխանել է, որ կիրառում է և կարծում է, որ խաղի ժամանակ տվյալ բառակազմությունը զուգորդվում է ինչ-որ բանի հետ, իսկ դա շատ է օգնում հիշել այն:

«Կրտսեր դպրոցականի բառապաշարը հարստացնելու նպատակով ուրիշ ի՞նչ մեթոդներ եք կիրառում» հարցին 30 ուսուցչից 18-ը նշել են, որ հիմնականում կիրառում են «Մտագրոհ», «Տ-ածև աղյուսակ» և այլ մեթոդական հնարներ: Ինը նշել են խմբային կամ թիմային աշխատանք, հեքիաթի ընթերցում: Երեք ուսուցիչ էլ կարևորել է **հոմանիշների կիրառումը**, որոնք շատ են հարստացնում աշակերտի բառապաշարը, **թեստերը, տեսահոլովակները**, որոնք ավելի լավ են տպավորություն գործում, **բառային աշխատանքները, խաղերի կիրառումը, բանավեճերը**:

*Հաջորդ՝ «Բառակազմության ուսուցումը օգնու՞մ է արդյոք բնագրի բովանակությունը հեշտությամբ ընկալելուն» հարցին ուսուցիչ*ների 79%-ը պատասխանել է, որ բառակազմության ուսուցումը տարրական դասարաններում օգնում է բնագրի բովանդակությունը հեշտությամբ ընկալելուն, որ բառակազմությունն ուսումնասիրելիս երեխաները սովորում են վերլուծել իրենց անծանոթ բառը, այն տրոհել մասերի, ինչն էլ օգնում է ամբողջությամբ բառի իմաստո ընկալելուն: Եթե բնագրում անծանոթ բառերը վերլուծելով ընկալեն իմաստը, ապա կընկալեն նաև բնագրի բովանդակությունը: 21%-ը կարծում է, որ քիչ է օգնում:

«Հաճա՞խ եք բառակազմական նյութի ուսուցման ժամանակ օգտագործում զննական պարագաներ: Ինչու՞» հարցին 30 ուսուցչից 23-ը դրական պատասխան են տվել և հիմնավորել, որ զննական պարագաներով դասերը տպավորվում են աշակերտների շրջանում և օգնում նրանց հեշտությամբ ընկալելու դասը, առանց զննական պարագաների աշակերտները դժվարությամբ կհասկանան նյութը, տեսողական ընկալումն արդյունավետ է դարձնում ուսուցումը, նյութի յուրացումն ավելի մատչելի է դառնում: **Երբեմն** կամ **ոչ հաճախ** պատասխան տվել են յոթ ուսուցիչ:

«Որքանո՞վ է բառակազմական վերլուծությունը կարևոր կրտսեր դպրոցում:» հարցին 30 ուսուցիչն էլ պատասխանել են, որ շատ կարևոր է, և հիմնավորել, որ այն զարգացնում է մտածողությունը, հիշողությունը, բառապաշարը և նստվածքային գիտելիքներ է տալիս, աշակերտները հեշտ են ընկալում կարդացած նյութը, բնագիրը, առանց վերլուծության անհնար է բառակազմություն ուսուցանել, հենց այդ ժամանակ է սկսում զարգանալ աշակերտների բառապաշարը, սովորում են՝ ինչ է արմատը, ածանցը, բարդ բառը: Վերլուծությունը մտավոր աշխատանք է, իսկ մտավոր աշխատանքը զարգացնում է երեխայի մտածողությունը:

«Հաճա՞խ եք օգտվում ուսումնաօժանդակ մեթոդական ձեռնարկներից» հարցին ուսուցիչների 68%-ը նշել է, որ հաճախ է օգտվում ուսումնաօժանդակ մեթոդական ձեռնարկներից, քանի որ դրանց օգնությամբ կարողանում են ավելի շատ աշխատանքներ կատարել, և դրանք օգտակար են: 32%-ը նշել է, որ հավադեպ է օգտվում, որովհետև դասագործընթացը կարճ է, և ժամանակը չի հերիքում:

Այսպիսով՝ անցկացրած հարցախույզի արդյունքում պարզ դարձավ, որ տարրական դասարաններում բառակազմական կարողությունների ձևավորումը և բառապաշարի հարստացումը օգնում են ուսուցման արդյունավետության բարձրացմանը, բարձրացնում նյութի յուրացման մակարդակը:

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը՝ կարելի է նշել, որ բառակազմության ուսուցումը տարրական դպրոցում նպաստում է աշակերտների գործուն և ոչ գործուն բառապաշարի հարստացմանը, օգնում է ձևավորելու նրանց լեզվամտածողությունը, զարգացնում է տրամաբանությունը:

Բառապաշարը հարստացնելու գործընթացում որոշակիորեն կարևորվում է հոմանիշ և հականիշ բառերի ուսուցումը, և այդ գործընթացը պետք է իրականացնել մի շարք ձևերով ու ուղղություններով, որպեսզի այդ ամենը նպաստի գործուն բառապաշարի հարստացմանը, ոչ գործուն բառապաշարի՝ ինչ-որ չափով ակտիվացմանը: Բառակազմական միավորների ուսուցումը, բառակազմական ձևերի գործածությունը և բառակազմական վերլուծությունը մեծ ու կարևոր դեր են կատարում նոր բառեր կազմելու կարողության ձևավորման և բառիմաստի ընկալման գործում՝ երկրորդաբար դառնալով բառապաշարի հարստացման հիմք:

Չնայած որ տարրական դպրոցի մայրենի լեզվի դասագրքերում «բառակազմություն» թեմայի վերաբերյալ կան հետաքրքիր և ուսուցողական առաջադրանքներ, այնուամենայնիվ, ուսումնասիրելով դասագրքերը և լսելով ուսուցիչների կարծիքները՝ համոզվեցինք, որ երրորդ և չորրոդ դասարանի մայրենիի դասագրքերում «բառակազմություն» թեմայով առաջադրանքները քիչ են, և աշակերտները, որոշ ընդհատումներով անցնելով թեման, մոռանում կամ դժվարությամբ են վերհիշում այն: Այդ պատճառով կարելի է բառակազմական առաջադրանքներ ներմուծել մյուս լեզվական նյութերի հետ համատեղ, որը նաև բառապաշարը հարստացնելու և զարգացնելու ևս մի հնարավորություն է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալայան Ա., «Բառակազմություն» թեմայի ուսուցումը համագործակցային մեթոդով, «Նախաշավիղ» հանդես, N 3-4, Ե. , 2005, 128 էջ:
2. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ե. , «Զանգակ» հրատ. , 2018, 344 էջ:
3. Խարազյան Ռ., Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, Ե. , «Ասողիկ » հրատ. , 2003, 128 էջ:
4. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Ե. , Երևանի համալսարանի հրատ. , 2004, 352 էջ:
5. Տեր -Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Տարրական դասարաններ, Ե. , «Լույս» հրատ. , 1980, 563 էջ:
6. Քյուրքչյան Ա., Տեր- Գրիգորյան Լ. Մայրենի 2, Ուսուցչի ձեռնարկ, Ե. , Էդիթ Պրինտ, 2009, 84 էջ:

Համացանցային կայքեր

1. ՀՀ օրենքը Հանրակրթության մասին
https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299
2. Հանրակրթության պետական կրթակարգ
https://www.irtek.am/views/act.aspx?aid=25829

THE STUDY OF WORD FORMATION AS MEANS OF ENRICHING THE VOCABULARY AMONG STUDENTS OF ELEMENTARY CLASSES

IGNATEVOSYAN NARINE
Graduate of the Master Program of
Elementary Pedagogy and Methodology, GSU
e-mail: nar.ignatevosyan@mail.ru
NERSISYAN VARSIK
PHD in Philology, Associate Professor
Senior Researcher at the language institute named
after H. Acharyan NAS RA
GSU, ASPU lecturer
e-mail: varsik.nersisyan@mail.ru

The study of word formation is considered one of the main sources of vocabulary enrichment and should remain at the center of the teacher's attantion. Without a rich and active vocabulary, one cannot make a descriptive, accurate and beautiful speech. All of this emphasizes the relevance of the topic of our research. The aim of the article is to identify the features of the study of word formation in elementary classes, present the role of word formation in the process of enriching students' vocabulary, and contribute to the improvement of teaching methods in the process of speech development through research work.

The article provides a brief analysis of theoretical literature on word formation in the modern Armenian language, as well as the scientific- methodical system of studying word formation in elementary classes. It is worth noting that teaching vocabulary in elementary classes contributes to the enrichment of students' active and passive vocabulary, helps develop their language thinking and also enhances logical reasoning.

Teaching word-formation , using lexical methods, and lexical analysis play a significant and important role in developing the ability to form new words and in understanding the meaning of a word, serving as the basis for vocabulary enrichment. We suggest introducing new word-formation tasks along with other language materials, which will contribute to the enrichment and development of vocabulary.

Keywords: *word formation, elementary classes, vocabulary, interactive methodological skills, experimental lessons, questionnaire.*

ИЗУЧЕНИЕ СЛОВООБРАЗОВАНИЯ КАК СРЕДСТВА ОБОГАЩЕНИЯ СЛОВАРНОГО ЗАПАСА УЧАЩИХСЯ МЛАДШИХ КЛАССОВ

ИГНАТЕВОСЯН НАРИНЕ
Выпускница магистратуры отделения
начальной педагогики и методики ГГУ
электронная почта: nar.ignatevosyan@mail.ru
НЕРСИСЯН ВАРСИК
Кандидат филологических наук, доцент
Преподаватель ГГУ и АГПУ
Старший научный сотрудник Института языка НАН РА
электронная почта: varsik.nersisyan@mail.ru

Изучение словообразования считается одним из основных источников обогащения словарного запаса и должно оставаться в центре внимания учителя. Без богатого и активного словарного запаса сложно построить описательную, точную и красивую речь. Все это обуславливает актуальность темы нашего исследования. Целью данной статьи является выявление особенностей изучения словообразования в начальной школе, представление роли словообразования в процессе обогащения словарного запаса учащихся, содействие совершенствованию методики обучения в процессе развития речи путем исследовательских работ.

Данная статья представляет краткий анализ теоретической литературы по словообразованию в современном армянском языке, а также научно-методическую систему изучения словообразования в начальных классах.

Следует отметить, что обучение лексике в начальной школе способствует обогащению активного и пассивного словарного запаса учащихся, помогает формированию у них языкового мышления, а также развивает логику. Обучение словообразовательным единицам, использование словообразовательных способов и словообразовательный анализ играют большую и важную роль в формировании способности образовывать новые слова и в восприятии значения слова, становясь основой для обогащения словарного запаса.

Предлагаем ввести словообразовательные задания совместно с другими языковым материалом, что будет способствовать обогащению и развитию лексики

Ключевые слова: *словообразование, начальные классы, словарный запас, интерактивные методические умения, экспериментальные уроки, анкета.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 17.08.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 20.08.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: